Հոկտ. 20. թ. 2003. Առաջադրութեամբ Հայրապետական ընտրութեան պատգամաւորներին ընդունելու և հիւրասիրելու համար կազմուեց յանձնաժողով որի նախագահն է Սինոդի անդամ Տ. Բարգէն վարդապետ, անդամներն են Վանական Կառավարութեան նախագահ Տ. Ներսէս վարդապետ Մելիք—Թանգեան, Տպարանի վարչութեան անդամ Տ. Արէլ Աբեղայ, որոնց պէտք է գործակցեն Ճեմարանի տեսուչ Տ. Բագրատ վարդապետ և Մայր Աթոռոյս հիւրընկալ Տ. Սիօն վարդապետ։

Հոկտ. 20. թ. 2004. Առաջադրուեց Սինոդին պատուիրել գանձապահին տալ կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորների ընդունելութեան Յանձնաժողովին ծախքի համար հարկաւոր գումարը։

Հոկտ. 31. թ. 2030. Յայտնուեց Կ. Պոլսոյ հայոց պատրիարքական Տեղապահին, թէ Ճեմարանում կընդունուեն այն պատանեակները որոնք ծրագրի համեմատ պատրաստ կը լինեն և հասակով էլ համապատասխան. նաև ուղարկուեց Գ. դասարանի ծրագրի մի օրինակ։

ՔԱՂՈՒԱԾ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Հոկտեմբեր 3. թ. 667. Սինոդը որոշեց հրաւիրել այս հոկտեմբերի 1-ից երդուեալ հաւատարմատարի օգնական պ. Աղէքսանդր Յարութիւնեան Պարոնեանցին վարելու Մայր Աթոռի դատական գործերը։ Պ. Պարոնեանը պարտաւոր է պաշտպանել Երևանի Նահանգական Դատարանում և Տիֆլիսի Դատաստանական պալատում Սինոդի, Երևանի կոնսիստորիայի և Երևանի թեմի վանքերի կալուածական և բոլոր այլ դատական գործերը։

Հոկտեմբեր 10. թ. 680. Սինոդը լսեց Ղարաբաղի կոնսիստորիայի 1910 թ. Սեպտեմբերի 22-ի № 3004 յայ-

տարարութիւնը, որով միջնորդում է Շուշու գաւառի Կիւնէյ—Ճարտար գիւղացի Սիմէոն Վարդապետեանին յիշեալ գիւղի «Կալեր» թաղի համար քահանայ ձեռնադրելու. որոշեց. որովհետև ընծայացու Սիմէոն Վարդապետեանը չունի ծխական կանոնադրութեան 59 յօդ. պահանջուած ուսման վկայական, ուստի Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութիւնը նորան Կիւնէյ-Ճարտարի «Կալեր» գիւղամասի համար քահանայ ձեռնադրելու մասին թողնել առանց հետևանքի։

Հոկտեմբեր 12. թ. 685. Սինոդը լսեց Ղազախի գաւառի Դուէղ գիւղի ծխական հոգաբարձութեան տարեցոյց մարտի 31-ի խնդիրը յիշեալ գիւղի Ս. Սարգիս ուխտատեղու արդիւնքի մասին, որոշեց. փոխելով Սինոդի 1908 թ. օգոստոսի 8-ի օրագրական վճիռը, Դուէղի Ս. Սարգիս ուխտատեղու արդիւնքը, Վրաստանի Հայոց կոնսիստորիայի եղրակացութեան համաձայն, յատկացնել յիշեալ գիւղի նոր բացուելիք դպրոցին ժամանակաւորապէս։ Այս վճռի կատարման համար հրաման տալ Վրաստանի Հայոց կոնսիստորիային։

Հոկտեմբեր 12. թ. 686. Սինոդը լսեց Հոգևոր Գործերի Դեպարտամենտի տարեցոյց ապրելի 21-ի № 3675 գրութիւնը Գորի քաղաքի բնակիչ Յովսէփ Տէր Ստեփանեանի կտակի մասին, որոշեց. պատուիրել Վրաստանի Հայոց կոնսիստորիային ընդունել, օրին, ժ. զ. XI հատն 1 մ. 1214 յօդ. համաձայն, Գորի քաղաքի բնակիչ Յովսէփ Տէր Ստեփանեանի կտակած խանութը ի սեպհականութիւն Ցխինվալ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու և ծխական դպրոցի։

Հոկտեմբեր 14. թ. 691. Սինոդը լսեց Սինոդի Պ. Պրոկուրորի անցեալ սեպտ. 28-ի № 284 գրութիւնը դրոշմային տուրքի մասին, որոշեց. շրջաբերական հրամանով պատուիրել Ռուսահայոց բոլոր կոնսիստորիաներին, որ մասնաւոր մարդկանցից խնդիրներ ու յայտարարութիւններ ընդունելիս, որպէս նաև վկայականներ և թղթ-

թեր տալիս անխախտ պահպանուին դրոշմային տուրքի վերաբերեալ կանոնադրութեան պահանջները ի խոյս պատասխանատուութեան տուրքերի վերաբերեալ կանոնադրութեան 163 և 182 յոդ. համաձայն (Ст. ст. 163 и 182 уст. о пошл.)։

Հոկտեմբեր 20. թ. 700. Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի այս տարուայ յուլիսի 20-ի № 5553 յայտարարութիւնը Ներուր-Դարալագեազ գաւառի Վարմազիար գիւղացի Ցարութիւն Տէր Գրիգորեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել Ներուր-Դարալագեազ գաւառի Վարմազիար գիւղացի Ցարութիւն Տէր Գրիգորեանին հոգևոր կոչման մէջ և առաջադրել Երևանի Փոխ-Թեմական ձեռնադրել նորան քահանայ նոյն գաւառի Փէշտազ գիւղի համար։

Հոկտեմբեր 20. թ. 702. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց կոնսիստորիայի տարեայս փետրուարի 2-ի № 445 յայտարարութիւնը Ղազախի գաւառի Թալա գիւղի ծերացած Խաչատուր քահանայի տեղ Գէորգ Այդինեանցին ձեռնադրելու մասին, որոշեց. ի նկատի առնելով, որ Թալա գիւղի Խաչատուր քահանայի քահանայագործելու անկարող լինելու մասին, բացի նորա ծերութիւնից, չկան փաստեր, այլ նա ինքը յայտնում է իւր ընդունակութիւնը իւր պաշտօնը շարունակելու մասին և չէ հրաժարւում քահանայագործելուց, ուստի մերժել Վրաստանի Հայոց կոնսիստորիայի միջնորդութիւնը Խաչատուր քահանայի տեղը Գէորգ Այդինեանցին ձեռնադրելու մասին։

Հոկտեմբեր 24. № 708. Սինոդը լսեց Կովկասի Պ. Փոխարքայի այս հոկտեմբերի 8-ի № 20872 գրութիւնը Ղարաբաղի և Վրաստանի Հայոց թեմերի ժամանակաւոր կառավարիչներ կարգելու մասին, որոշեց. նախ՝ Տ. Եփրեմ եպիսկոպոսի Վրաստանի Հայոց թեմի և Տ. Զաւէն վարդապետի Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ կարգուելու մասին տալ տեղեկութիւն իրենց

ու Վրաստանի և Ղարաբաղի կոնսիստորիաներին և երկրորդ պատուիրել Վրաստանի կոնսիստորիային տալ Տ. Եփրեմ եպիսկոպոսին առաջնորդական ռոճիկ 3000 ռուբլի տարեկան և Ղարաբաղի կոնսիստորիային՝ տալ Տ. Զաւէն վարդապետին տարեկան 2400 ռուբլի ռոճիկ։

Հոկտեմբեր 24 № 711. Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի ամսոյս 8-ի № 1968 առաջադրութիւնը Տ. Բենիկ վարդապետի պաշտօնավարելու մասին, որոշեց. Տ. Տեղակալի առաջադրութեան համաձայն կարճել այս հոկտեմբերի 1-ից Տ. Բենիկ վարդապետի միաբանական ռոճիկը և սննդադրամը, քանի որ նա այժմ պաշտօն է վարում Տփխիսի պետական գիմնազիոններից մէկում և ռոճիկ է ստանում այնտեղ։

Հոկտեմբեր 26. թ. 719. Սինոդը լսեց Ատրպատականի կոնսիստորիայի անցած օգոստոսի 16-ի № 2563 յայտարարութիւնը Էջմիածնի գաւառի Վաղարշապատ գիւղի բնակիչ Նիկողայոս Ճուղուրեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Ատրպատականի կոնսիստորիային ընդունել Նիկողայոս Ճուղուրեանին հոգևոր կոչման մէջ և առաջադրել Ատրպատականի Առաջնորդին ձեռնադրել նորան քահանայ Սուրբ Խաչ քաղաքի համար։